

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Թաթոսյան Քրիստինե Մուրադի

**ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)**

**Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն Արմենի Հայրապետյան

Պաշտոնական

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ընդդիմախոսներ՝

Միքայել Սերգեյի Մելքումյան

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Վիլեն Վիկտորի Խաչատրյան

Առաջատար

ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան

կազմակերպություն՝

տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հունիսի 5-ին, ժամը 14⁰⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:


Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի ապրիլի 29-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



S. Ս. Մարտիրոսյան

Արտենախոսության թեմայի արդիականությունը: Ապակենտրոնացման գործընթացները մեծ դեր են նշանակություն են ստանում հատկապես այն երկրներում, որտեղ իրականացվում են վարչատարածքային բարեփոխումների ակտիվ գործընթացներ: Թեև շատ երկրների վիճակագրությունը թույլ չի տալիս գնահատել ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա, այնուամենայնիվ, վերջին տարիներին իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ապակենտրոնացման բարձր մակարդակը դրականորեն է ազդում տեղական տնտեսական զարգացման վրա¹: Նշվածով պայմանավորված՝ ապակենտրոնացումը մեծ մարտահրավեր է դարձել հատկապես զարգացող երկրների համար:

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների գործընթացը մեկնարկել է 2011 թվականից, երբ ընդունվեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը, ինչը հիմնավորում էր ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների իրականացման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Համայնքների խոշորացման ավարտից հետո ֆինանսական և վարչական ապակենտրոնացման գործընթացների խորացման նախադրյալների գնահատման շրջանակներում համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման, ծախսերի կառավարման տնտեսական արդյունավետության մակարդակների, լիազորությունների և դրանց կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հնարավորությունների համաչափության, ինչպես նաև ՀՀ համայնքների տեղական տնտեսական զարգացման վրա ապակենտրոնացման ազդեցության գնահատման և, ըստ այդմ, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղղված առաջարկների մշակման անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսության նպատակն է գնահատել ՀՀ համայնքներում վարչական և ֆինանսական ապակենտրոնացման առկա մակարդակը, վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա՝ առաջարկելով ՀՀ համայնքներում լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների արդյունավետության բարձրացման ուղիներ:

Հիշյալ նպատակին համենելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Վերլուծել ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները՝ խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածի տվյալների կտրվածքով,
- Հետազոտել ապակենտրոնացման մակարդակի հաշվարկի և լիազորությունների ապակենտրոնացման համակարգի միջազգային փորձը, ինչպես նաև լիազորությունների ապակենտրոնացման շրջանակներում ֆինանսական ռեսուրսների ապահովմանն ուղղված մեխանիզմները,
- Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների ծախսերի արդյունավետության մակարդակը՝ մեկ շնչին բաժին ընկնող որոշ ծախսատեսակների համադրման միջոցով,

¹ OECD (2019), Making Decentralisation Work: A Handbook for Policy-Makers, OECD Multi-level Governance Studies, OECD Publishing, Paris. <https://doi.org/10.1787/g2g9faa7-en>. 30.05.2024.

- Համեմատաբար սկզբնական փուլերում խոշորացված ՀՀ համայնքներում հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների հիման վրա մշակել խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն,

- Բացահայտել համայնքների ղեկավարների լիազորությունների՝ ոչ ամբողջ ծավալով իրականացման հիմնական խոչընդոտները և մշակել դրանց արդյունավետության գնահատման գործիքակազմ,

- Իրականացնել գործոնային վերլուծություն ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա,

- Մշակել ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ,

- Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակը բնութագրող ցուցանիշների փոփոխության ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների վրա,

- Բացահայտել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման համակարգի գործող վիճակը, ներկայացնել ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկություններ,

- Ընդգծել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման արդյունավետ և գործող համակարգի ներդրման անհրաժեշտությունը, հիմնական մարտահրավերներն ու խոչընդոտները, և առաջարկել դրանց արդյունավետության բարձրացման այնպիսի ուղիներ, որոնք կարող են միաժամանակ նպաստել նաև տեղական տնտեսական զարգացմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ համայնքներ են: Հետազոտության առարկան ՀՀ համայնքների եկամուտների, ծախսերի, ինչպես նաև համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման և տեղական տնտեսական զարգացման կապերի բացահայտմանն ուղղված վերլուծությունն է:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատության, համադրության, հարցումների, գրաֆիկական մեկնաբանման, ընդհանուր գիտական վերլուծության, դինամիկ և կառուցվածքային դիտարկումների, ինդուկցիայի, գործոնային և ռեգրեսիոն վերլուծության մեթոդները: Մեթոդների ընտրության նպատակահարմարությունը պայմանավորված է ՀՀ համայնքների մի շարք տվյալների նկատմամբ զուգահեռ համեմատականներ և համադրումներ կատարելու անհրաժեշտությամբ՝ հատկապես խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածի կտրվածքով: Ընտրված մեթոդները թույլ կտան բացահայտել նաև ՀՀ խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների միջև փոխհարաբերությունները, օրինաչափությունները և պատճառահետևանքային կապերը: Հաշվի առնելով նաև այն, որ խոշորացման ազդեցության գնահատումը առավել արդյունավետ կարող է համարվել կոնկրետ ընտրված համայնքների տվյալների վերլուծության շրջանակում՝ ինդուկցիայի մեթոդի կիրառումը էապես կարող է հեշտացնել ընդհանուր օրինաչափությունների բացահայտումը կոնկրետ համայնքներում կիրառված վերլուծության արդյունքների հիման վրա:

Հետազոտության շրջանակներում տեղեկատվական հիմքեր են հանդիսացել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ մարզպետների աշխատակազմերի, ՀՀ համայնքների պաշտոնական

կայքերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները, ինչպես նաև միջազգային մի շարք կառույցների պաշտոնական կայքերը:

Արենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական արդյունքները ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում.

1. ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա մշակվել է գործոնային վերլուծության իրականացման մոդել, որի միջոցով հնարավոր է բացահայտել համայնքների տեղական տնտեսական զարգացման հնարավորությունները: Մոդելը կարող է կիրառվել ՀՀ համայնքներում երկարաժամկետ տեղական տնտեսական զարգացման ուղղությունների արդյունավետ պլանավորման համար:

2. Մշակվել է համայնքների ղեկավարների լիազորությունների իրականացման արդյունավետության գնահատման գործիքակազմ, ՀՀ խոշորացված 64 համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հարցումների հիման վրա՝ գործոնների հարաբերական կարևորության կշիռների ստացման մեթոդով: Գործիքակազմը թույլ է տալիս ՀՀ համայնքներում բացահայտել լիազորությունների արդյունավետ իրականացմանը խոչընդոտող հիմնական գործոնները:

3. Մշակվել է ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ, ինչի հիման վրա առաջարկվել է ՀՀ համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակի վրա խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն՝ համայնքներում եկամուտների և ծախսերի՝ ՀՆԱ ցուցանիշով կշռված ապակենտրոնացման ինդեքսների կիրառմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են կիրառվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ խոշորացված համայնքների, ինչպես նաև տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ռազմավարությունների, քաղաքականությունների մշակման գործընթացներում:

Հետազոտության արդյունքները կիրառելի կարող են լինել նաև ոլորտի փորձագետների, հետազոտողների, ասպիրանտների և այլ շահագրգիռ անձանց շրջանակներում:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Աշխատանքի հիմնական արդյունքները քննարկվել են ՀՊՏՀ «Ամբեր» հետազոտական կենտրոնում: Հետազոտության արդյունքների առանձին դրույթներ առաջիկայում կօգտագործվեն ՀՀ 2024-2030 թվականների տարածքային զարգացման ռազմավարության նախագծում, ինչպես նաև ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի և «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության համագործակցության շրջանակներում իրականացվող՝ «Տեխնիկական օժանդակություն խոշորացված համայնքներին» ՏԻՄ հզորացման, համայնքային կարողությունների զարգացման, հաշվետվողականության կառավարման, և հանրային հաղորդակցության բարելավման ուղղությամբ» ծրագրի շրջանակներում տեղական տնտեսական զարգացման բնագավառի վերաբերյալ ուսուցողական մոդելների մշակման և համապատասխան ձեռնարկի կազմման աշխատանքներում:

Աշխատանքի հիմնական արդյունքները ամփոփվել են 10 հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 162 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «**Ներածություն**» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորոյթներն ու դրանց գործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտության առաջին՝ **«Ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության գործոն»** գլխում ուսումնասիրվել է լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների փորձը կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող աշխարհի մի շարք երկրներում, ինչպես նաև ապակենտրոնացման մակարդակի և վերջինիս՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման միջազգային պրակտիկայում առկա գործիքակազմերը և դրանց՝ << խոշորացված համայնքներում կիրառման հնարավորությունները:

Պարզվել է, որ հարկաբյուջետային ապակենտրոնացման՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման արդյունքում ապակենտրոնացման ցուցանիշները հիմնականում դրական ազդեցություն են ունենում ՀՆԱ-ի, մարդկային կապիտալում կատարված ներդրումների, ինչպես նաև կրթության ոլորտի հիմնական արդյունքների վրա:

Միաժամանակ, Եվրոպական միության և Արևելյան Եվրոպայի մի քանի հետխորհրդային պետությունների ծախսերի և եկամուտների ապակենտրոնացման աստիճանի՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատումները թույլ են տվել պարզել, որ ապակենտրոնացումը ունի փոքր բացասական ազդեցություն տնտեսական աճի վրա, իսկ ծախսերի ապակենտրոնացումը միտված է խթանելու տնտեսական զարգացումը:

Այսպիսով, մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ապակենտրոնացման ազդեցության գնահատման գործիքակազմերը և դրանց արդյունքները միանշանակ չեն և յուրաքանչյուր երկրում դրանք կարող են ունենալ տարբեր կիրառելիություն և ապահովել շատ տարբեր արդյունքներ՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից և տեղական ինքնակառավարման համակարգի առանձնահատկություններից:

Ատենախոսության երկրորդ՝ **«<< վարչապարածքային բարեփոխումների ազդեցությունը ապակենտրոնացման գործընթացների կազմակերպման և իրականացման վրա»** գլխում վերլուծվել են << խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները, փորձ է արվել գնահատել խոշորացման ազդեցությունը համայնքների ծախսերի կառավարման արդյունավետության վրա: Իրականացվել է նաև համայնքի ղեկավարների լիազորությունների և դրանց՝ ֆինանսական համաչափության գնահատում, ինչի արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակադրումը մշակվել է լիազորությունների արդյունավետության գնահատման գործիքակազմ:

Իրականացված վերլուծությունների արդյունքում պարզ է դարձել, որ խոշորացված համայնքներում 11 տարվա կտրվածքով կա սեփական եկամուտների բացարձակ ցուցանիշով ընդհանուր աճի միտում, ինչը որոշ չափով պայմանավորված է ՀՀ մի շարք համայնքներում հարկահավաքման տոկոսի ավելացմամբ: Միաժամանակ, խոշորացումից հետո համայնքներում նկատվում է եկամուտների ապակենտրոնացման մակարդակի թուլացում², ինչը պայմանավորված է համայնքների՝ պետական բյուջեից աճող կախվածությամբ, որի արդյունքում պաշտոնական դրամաշնորհները խոշորացումից հետո բյուջեում ունեցել են առավել մեծ տեսակարար կշիռ, քան սեփական եկամուտները:

Արդյունքում, սահմանափակվում են համայնքի հնարավորությունները ինքնուրույն որոշումներ կայացնելու և սեփական եկամուտը տնօրինելու տեսանկյունից, որն առավելապես խնդրահարույց է դառնում լիազորությունների ապակենտրոնացման առաջիկա հնարավորությունների ուսումնասիրության համատեքստում:

Այնուհանդերձ, եկամուտների ապակենտրոնացման մակարդակի թուլացումը և պետական բյուջեից ունեցած կախվածությունը միանշանակորեն չեն կարող բացառել համայնքում տեղական տնտեսական զարգացմանը նպաստող որոշակի ոլորտներում ներդրումներ իրականացնելու հնարավորությունը, հատկապես այն պարագայում, երբ պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհների հաշվին, հատկապես սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, հնարավորություններ են ստեղծվել կապիտալ ներդրումներ իրականացնելու ուղղությամբ:

Ելնելով վերոշարադրյալից՝ հետազոտության շրջանակներում առաջադրված հիպոթեզը հետևյալն է. *ՀՀ-ում համայնքների զարգացումը կարող է ընթանալ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության և եկամուտների ապակենտրոնացման մակարդակի նվազման պայմաններում: Վերջինս կարելի է հիմնավորել հետազոտության շրջանակներում վերլուծության ենթարկված Ծաղկահովիտ և Ալազյազ համայնքների օրինակներով: Վերջիններս, ունենալով պետական բյուջեից աճող կախվածություն, կարողացել են համայնքապետարանի աշխատակազմին վճարվող աշխատավարձերի ֆոնդի մեկ շնչին բաժին ընկնող ցուցանիշի նվազման պայմաններում ապահովել տնտեսական հարբերությունների գծով մեկ շնչին բաժին ընկնող ֆոնդային ծախսերի կտրուկ աճ՝ ծախսերի մեծ մասը ուղղելով ենթակառուցվածքների բարելավմանը և այլուերալ նաև անուղղակիորեն նպաստելով տեղական տնտեսական զարգացմանը:*

Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի տնտեսական արդյունավետության գնահատումը Չարենցավան համայնքում թույլ է տվել պարզել, որ խոշորացումն ավելի շատ դրական արդյունքներ է ապահովել այն բնակավայրերում, որոնք մինչ խոշորանալը ծախսերի կեսից ավելին ուղղում էին վարչական ապարատի պահպանմանը: Մասնավորապես, խոշորացումից առաջ Չարենցավան համայնքի կազմում ներառված՝ Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան համայնքներում (ներկայումս՝ բնակավայրեր) համայնքապետարանների աշխատակազմին վճարվող աշխատավարձերի հարաբերական ցուցանիշները միջինում 50%-ից ավելի են կազմել, մինչդեռ խոշորացման

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով վերլուծության ենթարկված խոշորացված համայնքների՝ 2012-2022 թվականների *ՀՀ համայնքների բյուջետային եկամուտների հաշվետվությունները: Աղբյուր՝ <https://www.mtad.am/pages/budgetary-revenues-ra-communities>. 28.04.2024:*

Եկամուտների ապակենտրոնացման հաշվարկը կատարվել է հետևյալ բանաձևի կիրառմամբ. *Եկամուտների ապակենտրոնացման մակարդակ=Համայնքի ընդհանուր եկամուտներ-պետության կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ընդհանուր եկամուտներ:*

արդյունքում նույն ցուցանիշը Չարենցավան խոշորացված համայնքի բյուջեում կազմել է միջինում 22%³:

ՀՀ խոշորացված համայնքներում ապակենտրոնացման գործընթացների առաջիկա խորացման նախադրյալների ուսումնասիրության շրջանակներում խոշորացված համայնքների տեղական տնտեսական զարգացման վրա ուղղակի և անուղղակի կերպով ազդող լիազորությունների և դրանց՝ ֆինանսական համաչափության գնահատման համատեքստում հնարավոր է դարձել եզրակացնել, որ համայնքը՝ իր լիազորությունների միջոցով տեսականորեն կարող է նպաստել տեղական տնտեսական զարգացմանը, սակայն երբ պայմանականորեն ընտրված Ալազյազ և Կապան խոշորացված համայնքներում վերլուծում ենք դրա գործնական կիրառելիությունը, տեսնում ենք, որ այդ լիազորությունները իրականացնելու գործընթացում առաջ են գալիս մի շարք խնդիրներ՝ *կապված ֆինանսական ռեսուրսների սղության/անհամապատասխանության, տվյալ լիազորության իրականացման արդյունավետության գնահատման համակարգի բացակայության, ինչպես նաև տվյալ համայնքի հնգամյա զարգացման ծրագրերում այդ լիազորությունից բխող որոշակի գործունեության ուղղությունները ոչ ամբողջական պլանավորելուց*: Միաժամանակ, Ջերմուկ խոշորացված համայնքի բյուջեի համամասնությունների վերլուծության արդյունքում հնարավոր է դարձել գնահատել համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման արդյունավետությունն ըստ բյուջետային հատկացումների, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ համայնքների խոշորացման արդյունքում էականորեն բարելավվել են փոքր և ոչ կենսունակ համայնքների (այժմ՝ բնակավայր) հանրային բնույթի ծառայությունների (կրթություն, տրանսպորտ, աղբահանություն և այլն) մատուցման քանակական հատկանիշները: Մինչդեռ, խոշորացումը շատ չնչին դրական ազդեցություն է թողել խոշոր համայնքային պարտադիր խնդիրների՝ առավել մեծ ծավալով և արդյունավետ իրականացման վրա:

Արդյունքում, համայնքների այն սեփական լիազորությունները, որոնք ուղղված են երկարաժամկետ տնտեսական և համայնքային կարողությունների զարգացմանը դեռևս պատշաճ կերպով չեն իրականացվում: Ստացվում է, որ համայնքները խոշորացումից հետո շարունակում են հանդես գալ որպես առաջնային կարիքների բավարարմանն ուղղված հանրային բնույթի ծառայություններ մատուցողի դերում⁴:

Ելնելով վերոգրյալ վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների շրջանակից, և պայմանավորված լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների առաջիկա խորացմամբ՝ հետազոտության շրջանակներում մշակվել է լիազորությունների արդյունավետության գնահատման գործիքակազմ: Հիշյալ գործիքակազմի մշակման նպատակով 64 խոշորացված համայնքների ղեկավարների շրջանում անցկացված հարցման արդյունքները մաթեմատիկական բանաձևերի միջոցով ստացել են կշիռներ, որոնց հիման վրա հաշվարկվել են նորմալացման տոկոսները: Ստորև ներկայացվում է մշակված բանաձևերի համախումբը:

³ Հ. Գալստյան, Բ. Թաթոսյան, Գ. Բաղդյան (2023), ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի օպտիմալ կառավարման մակարդակի գնահատումը (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի օրինակով), «ԲԱՆԲԵՐ Եվրասիա» միջազգային համալսարանի, N2, DOI: 10.53614/18294952-2023.2-93, <https://banber.eiu.am/index.php/banber/article/view/244/264>, էջ 100, 10.04.2024:

⁴ Բ. Թաթոսյան (2022), Համայնքների խոշորացման ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում (Ջերմուկ խոշորացված համայնքի օրինակով), «ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ», N2, <https://asue.am/upload/files/science/banber/2022-year-2/4.pdf>, էջ 63, 03.03.2024:

Մգործոն= $\sum_{i=1}^n$ **Մգործոն i/n,**

որտեղ՝

Մգործոն՝ գործոնի միավոր,

$\sum_{i=1}^n$ **Մգործոն i**–ն՝ գործոնի վերաբերյալ հարցերի միավորների (1-5) ընդհանուր հանրագումար

n–ը՝ հարցման մասնակիցների ընդհանուր թիվ

Նորմալացված կշիռ_i=**Մգործոն/** $\sum_{j=1}^n$ **Ն_j,**

որտեղ՝

Ն_i– գործոնին վերագրվող կշիռ,

Ն_j– բոլոր գործոնների կշիռների գումար

Վերոնշյալ բանաձևերի կիրառման արդյունքները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 1

ՏԻՄ լիազորությունների արդյունավետության գործոնները՝ ըստ հիմնական գործոնների նորմալացման փոկոսների և այդ գործոնների հիմնական բաղադրիչների^{5, 6}

Համապարասխան գործոնները	Գործոնի միջին միավորը	Նորմալացված կշիռը	Նորմալացման տոկոսը
Գործոնի հիմնական բաղադրիչները և գնահատման համապարասխան սանդղակը			
Գործոն 1: Համայնքում համապատասխան ենթակառուցվածքների և ռեսուրսների բացակայության ազդեցությունը ՏԻՄ կոնկրետ լիազորություններն իրականացնելու գործընթացի վրա	3.2	0.086	8.6
Բաղադրիչ 1: Տվյալ ոլորտի լիազորությունն իրականացնելու համար անհրաժեշտ կոնկրետ ռեսուրսով ապահովվածություն			
Բաղադրիչ 2: ՏԻՄ՝ տեղական տնտեսական զարգացմանն ուղղված լիազորությունների և ֆինանսական հնարավորությունների համապարասխանություն			
Գործոն 2: Համայնքում ֆինանսական միջոցների բացակայության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների իրականացման գործընթացի վրա (համայնքի սեփական և ոչ սեփական միջոցների համապատասխանությունը համապատասխան լիազորությանը)	3.7	0.099	9.9
Բաղադրիչ 1: Սեփական եկամուտների ձևավորման աղբյուրների համապարասխանությունը լիազորությանը			
Բաղադրիչ 2: Ոչ սեփական եկամուտների (պաշտոնական դրամաշնորհներ) համապարասխանությունը լիազորությանը			
Բաղադրիչ 3: Համայնքի ղեկավարի ջանքերը ֆինանսական այլ միջոցներ (պարտավորումների թողարկում,			
Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս նշված ռեսուրսի ամբողջովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին ապահովվածություն			
Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս համապատասխանության/գործունեության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն			

⁵ Առաջարկվող գործիքակազմում գործոնների բաղադրիչների գնահատումն անհրաժեշտ է իրականացնել 0-3 միջակայքի սահմաններում:

⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով գործոնների հարաբերական կարևորության կշիռների ստացման մեթոդով ստացված արդյունքները:

օրագրերկրյա ներդրումների ներգրավում) և ռեսուրսներ ներգրավելու փնտանկյունից			
Գործոն 3: Համայնքապետարանի կարողությունների, փորձի և հմտությունների բացակայության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա (հմուտ անձնակազմի առկայություն, վերապատրաստման ծրագրեր)	2.8	0.076	7.6
Բաղադրիչ 1: Համայնքապետարանի աշխատակիցների մասնագիտական աճին ուղղված պետական և մասնավոր ծրագրերի առկայությունը համայնքում	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս գործունեության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Համագործակցությունը փեդի ուսումնական հաստատությունների հետ			
Գործոն 4: Համայնքի որոշումների կայացման և քաղաքականության մշակման ու իրականացման ինքնավարության և անկախության մակարդակի ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա	2.8	0.075	7.5
Բաղադրիչ 1: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի համապատասխանությունը համայնքի կարիքներին և առաջնահերթություններին	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս համապատասխանության/մակարդակի լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Լիազորությունների պարզաբանման գնահատում (ԵՄ մեթոդաբանության հիման վրա)			
Բաղադրիչ 3: Ինքնավարության մակարդակ (ԵՄ մեթոդաբանության հիման վրա)			
Գործոն 5: Համայնքի բնակիչների՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու ակտիվության (նախաձեռնող խմբերի ձևավորում, ավագանու նիստերի ընթացքում օրակարգում հարցի ընդգրկում) ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների իրականացման գործընթացի վրա	2.9	0.079	7.9
Բաղադրիչ 1: Համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքի ՏԻՄ-ի կողմից կազմակերպված հանրային խորհուրդներին	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս մասնակցության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Համայնքի բնակիչների կողմից համայնքի ավագանու նիստերի օրակարգում ընդգրկվելու համար առաջարկվող հարցերի հաճախականությունը			
Գործոն 6: Տարածքային կառավարման մարմինների՝ մարզպետի՝ այդ բնագավառում առկա լիազորությունների (որոնք հատվում են ՏԻՄ լիազորությունների հետ) ազդեցությունը ՏԻՄ՝ այդ բնագավառում առկա լիազորությունների իրականացման գործընթացի վրա	1.8	0.048	4.8
Բաղադրիչ 1: Համայնքում առկա ոլորտային խնդիրների լուծման գործընթացում մարզպետի աշխատակազմի ներգրավվածությունը	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս ներգրավվածության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: ՏԻՄ-երի ներգրավվածությունը տարածքային կամ պետական կառավարման մարմիններում որոշումների կայացման գործում (համայնքին վերաբերող որոշումներում)			
Գործոն 7: ՏԻՄ լիազորությունների օրենսդրական ձևակերպման անհստակությունը և դրանց արդյունա-	2.7	0.073	7.3

վետության գնահատման մեխանիզմների բացակայության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա			
Բաղադրիչ 1: ՏԻՄ լիազորությունների արդյունավետության գնահատման մեխանիզմի առկայություն	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս մեխանիզմի/ հստակության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Համայնքի ղեկավարի պատկերացումը օրենսդրորեն սահմանված լիազորության վերաբերյալ (օրենսդրական հստակություն)			
Գործոն 8: Համայնքում՝ տեղական բիզնեսներին տրամադրվող աջակցության ծրագրերի (օրինակ՝ գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտում), այդ թվում՝ ձեռնարկատիրությամբ զբաղվել ցանկացողների վերապատրաստման, ձեռնարկատիրության աջակցության ծառայությունների ոչ բավարար քանակի/բացակայության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա	2.5	0.066	6.6
Բաղադրիչ 1: Համայնքի տեղական բիզնեսների խթանմանն ուղղված նախաձեռնությունների իրականացում	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս նախաձեռնությունների/դասընթացների լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Համայնքում բիզնես դասընթացների իրականացում			
Գործոն 9: Համայնքի տեղական բիզնեսների զարգացումը խթանելու տեսանկյունից օտարերկրյա ներդրումների ոչ բավարար քանակը/բացակայության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա	2.8	0.075	7.5
Բաղադրիչ 1: Արտաքին ֆինանսավորմամբ (օրինակ՝ օտարերկրյա դրամաշնորհներ) համայնքում ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս ծրագրերի լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Համայնքում բացված բիզնեսներ՝ օտարերկրյա ֆինանսավորման միջոցով			
Գործոն 10: Համայնքում տեղական տնտեսական զարգացմանն ուղղված ենթակառուցվածքների բացակայության (ոռոգման և խմելու ջրի հասանելիություն, ճանապարհների առկա վիճակ և այլն) ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա	3.3	0.090	9.0
Բաղադրիչ 1: Համայնքում ոռոգման ջրի համակարգի առկա վիճակը	Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս համապատասխան ռեսուրսի լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Համայնքում ճանապարհների առկա վիճակը			
Գործոն 11: Համայնքում աշխատուժի կրթմանը, բիզնեսով զբաղվելու հմտությունների բարելավմանը (որոնք համապատասխանում են տվյալ շրջանի տեղական տնտեսական առկա պոտենցիալին) ուղղված տեղական նախաձեռնությունների ոչ բավարար քանակի/	2.9	0.077	7.7

Աղյուսակ 1-ի շարունակություն

բացակայության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա				
Բաղադրիչ 1: Համայնքում գործող բիզնես ներկայացուցիչների բիզնես հմտությունների բարելավմանն ուղղված տեղական ծրագրեր		Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս տեղական ծրագրերի, կամ դրանց խանության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Կրթական ծրագրերի համապատասխանությունը տեղական տնտեսական զարգացման պոտենցիալին				
Գործոն 12: ՏԻՄ-պետական համագործակցության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա		3.2	0.085	8.5
Բաղադրիչ 1: Պետական մասնավոր համագործակցության քանակը և արդյունավետությունը		Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0 միավորը ցույց է տալիս արդյունավետության/հաճախականության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի հաճախականությունը և երկարաժամկետայնությունը				
Գործոն 13: ՏԻՄ-համայնքում գործող մասնավոր ընկերություններ համագործակցության ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման գործընթացի վրա		2.7	0.073	7.3
Բաղադրիչ 1: ՏԻՄ-մասնավոր համագործակցության արդյունավետություն/առկա փորձ		Նշված ցուցանիշները գնահատվում են 0-3 բալային համակարգով, որտեղ 0-միավորը ցույց է տալիս արդյունավետության լիովին բացակայություն, իսկ 3 միավորը՝ լիովին առկայություն		
Բաղադրիչ 2: ՏԻՄ-մասնավոր համագործակցության արդյունքում ստեղծված աշխատատեղեր				

Աղյուսակ 1-ում ներկայացված գործոնների նորմալացման կշիռների և բաղադրիչների համապատասխան գնահատականներ տալու արդյունքում անհրաժեշտ է գնահատել կոնկրետ լիազորության կատարման արդյունավետությունը կոնկրետ համայնքի օրինակով՝ ներքոնշյալ բանաձևի հիման վրա.

$$L4U = \sum (L_i * B_i) * 100$$

որտեղ՝

L4U - Լիազորության կատարման արդյունավետություն

L_i - Նորմալացման կշիռ

B_i - Ենթագործոնի միջին միավոր/3

Այսպիսով, առաջարկվող գործիքակազմը հնարավորություն կտա գնահատել տարբեր ոլորտներում առկա՝ համայնքի ղեկավարների լիազորությունների արդյունավետության մակարդակը, ինչն առավել ակնառու կդարձնի դրանց իրականացման հիմնական խոչընդոտներն ու մարտահրավերները՝ ընդգծելով նաև նոր լիազորություններն առաջիկայում ստանձնելու առկա ռիսկերը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ապակենտրոնացման գործընթացի կազմակերպման և իրականացման քանակական գնահատման հիմքերը»** գլխում ՀՀ խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական ցուցանիշների հիման վրա իրականացվել է գործոնային վերլուծություն, մշակվել է հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների

համակարգ՝ փորձելով գնահատել վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման ցուցանիշների վրա, ինչպես նաև մշակվել է եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման չափման մեթոդաբանություն:

Գործոնային վերլուծության համար հիմք են հանդիսացել 24 խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վիճակը բնութագրող մի շարք հարաբերական ցուցանիշներ. գյուղատնտեսական և արտադրական նշանակության հողեր, համայնքներում գործող արտադրական, առևտրային կազմակերպությունների թիվ, դրանցում ներգրավված աշխատակիցների թիվ, ինչպես նաև գործազուրկների, կենսաթոշակառուների, փոխյին փոխեսությունների, նպաստառու ընդհանրների թիվ:

Իրականացված գործոնային վերլուծության արդյունքում ձևավորվել են երկու նշանակալի գործոնային խմբեր:

Աղյուսակ 2

Գործոնների արժեքները՝ ըստ ՀՀ խոշորացված համայնքների (գործոնային ծանրաբեռնվածություններ)⁷

Համայնք	Գործոն 1 «Համայնքի արտադրական հնարավորություններ»	Գործոն 2 «Տնտեսական զարգացմանը մասնակ- ցություն չունեցող բնակչություն»
Ծաղկահովիտ	-.61697	2.49519
Այազյազ	-.72906	3.75358
Չարենցավան	.97107	.06197
Ջրվեժ	-.43827	-.63587
Եղեգիս	-.47853	-.33825
Մեղրի	.41753	-.09830
Տաթև	-.91317	-.48046
Անի	-.12428	-.26168
Լոռի Բերդ	-.64481	.24378
Բերդ	.94541	-.39663
Արևուտ	-1.13274	-.88420
Մեծածոր	-1.17664	-.91170
Արարատ	1.48150	.64597
Փարաքար	1.61492	-.56741
Բյուրեղավան	.23473	-.06052
Ծաղկածոր	-.81032	-.62323
Վայք	-.27733	.27244
Աշոցք	-.72686	-.06642
Արթիկ	.64984	.06404
Փամբակ	.15949	-.43218
Թումանյան	-1.05625	-.71380
Նոյեմբերյան	2.75615	-.13881
Գավառ	1.35652	-.15078
Ճամբարակ	.49006	.61559

✓Առաջին՝ «Համայնքի արտադրական հնարավորություններ» գործոնային խմբում նշանակալիություն ապահոված Արարատ, Փարաքար, Նոյեմբերյան և Գավառ համայնքներում նկատելի է դարձել գյուղատնտեսական նշանակության հողերի հնարավոր օգտագործման կտրվածությունը համայնքի արտադրական գործունեությունից: Ստացվում է, որ հողի առկայությունը միայն չի կարող երաշխիք հանդիսանալ համայնքներում

⁷ Գործոնային վերլուծությունն իրականացվել է SPSS ծրագրային փաթեթի գործոնային վերլուծության գործիքի կիրառմամբ, որում ներառված ցուցանիշները ձևավորել են 2 նշանակալի գործոնային խմբեր:

գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից: Վերհանված խնդիրը հիմնավորվում է նաև այն կետում, երբ պարզ է դառնում, որ ՀՀ մի շարք համայնքներում, անգամ խոշորացումից հետո չկան ոլորտի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ և համայնքներում տեղական տնտեսական զարգացման ծրագրերը չեն արտացոլում տվյալ համայնքի՝ գյուղատնտեսության զարգացման ոլորտն պոտենցիալը: Շատ համայնքներում երկարաժամկետ պլանավորումն իրականացվում է այնպիսի վերջնարդյունքների նպատակադրմամբ, որոնց հասնելը համայնքում անհրատեսական է թվում՝ նվազագույն ռեսուրսների բազակալությամբ պայմանավորված:

✓ Երկրորդ՝ «Տնտեսական զարգացմանը մասնակցություն չունեցող բնակչություն» գործոնային խմբում նշանակալիություն ապահոված Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներում նկատվում է արտադրական պոտենցիալի ոչ ամբողջ ծավալով օգտագործում մարդկային կապիտալի կողմից և ՏԻՄ-երի գործունեությունը այս համայնքներում հիմնականում կտրված է բնակիչների սոցիալական խնդիրների երկարաժամկետ լուծումներ մշակելուց: Վերջինս պայմանավորված է այն իրողությամբ, որ համայնքի ղեկավարների լիազորությունները այս ոլորտում հիմնականում կապված են սոցիալական կարճաժամկետ ծրագրեր՝ տեղերում իրականացնելու հետ, մինչդեռ սոցիալական խնդիրների հաղթահարումը համայնքների խոշորացման համատեքստում բավականին խոցելի է դարձել:

Առաջարկվող գնահատումների մեթոդաբանության կիրառումը արդյունավետ կարող է դիտվել հատկապես խոշորացման գործընթացներով պայմանավորված, ինչի շրջանակներում մի շարք ռեսուրսների միավորման պայմաններում հնարավորություններ են ստեղծվել առավել արդյունավետ կերպով իրականացնել գյուղատնտեսության զարգացման պլանավորում: Գործոնային վերլուծության արդյունքներով պայմանավորված՝ կարևոր է դառնում նաև բացահայտել այն հիմնական խոչընդոտները, որոնք առկա են համայնքի ղեկավարների՝ գյուղատնտեսության և սոցիալական ոլորտների լիազորությունների ապակենտրոնացման խորացման գործընթացներում: Նման գնահատումները թույլ կտան նաև համայնքների զարգացման ծրագրերում պլանավորել այնպիսի գործողություններ, որոնք կտրված չեն համայնքում առկա խնդիրներից և մատնանշում են իրավիճակով պայմանավորված խնդիրների չափելի լուծումները:

ՀՀ խոշորացված համայնքներում հարկաբյուջետային քաղաքականության՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման նպատակադրմամբ իրականացված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ խոշորացման ազդեցության պայմաններում համայնքներում նկատվում է պետական բյուջեից կախվածության մեծացում և հարկային ինքնավարության թուլացում: Ռեգրեսիոն վերլուծությունն իրականացվել է 2012-2022 թվականների՝ ՀՀ խոշորացված 10 համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակը բնութագրող ցուցանիշների հիման վրա⁸:

Արդյունքում պարզ է դարձել, որ եթե խոշորացումից առաջ համայնքում հարկային ինքնավարության աճը հանգեցնում էր «սեփական եկամուտներ/ՀՆԱ» աճին և այդ ցուցանիշը ուներ նշանակալիություն ստացված մոդելում ($P\text{-արժեք}=0.007$), ապա

Ցուցանիշների համակարգը ձևավորվել և հաշվարկվել է հեղինակի կողմից: Վերլուծության շրջանակներում որպես կախյալ փոփոխական է դիտարկվել «համայնքի սեփական եկամուտ/ՀԱ» հարաբերակցությունը, իսկ որպես անկախ փոփոխականներ են դիտարկվել համայնքում տեղական հարկեր/ընդհանուր ծախսեր (հարկային ինքնավարություն), «պաշտպանական դրամաշնորհներ/համայնքի ծախսեր» (համայնքի կախվածությունը պետական բյուջեից), «համայնքի ծախսեր/մարզի ՀՆԱ», «համայնքի նախարարության կառուցվածքային կազմում ծախսեր/ընդհանուր ծախսեր» ցուցանիշները:

խոշորացումից հետո այդ ցուցանիշը նշանակալիություն չի ապահովել ($P\text{-արժեք}=0.964$): Փոխարենը՝ նշանակելի է դարձել «պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ծախսեր» ցուցանիշը (պետական բյուջեից կախվածություն)՝ ընդ որում հակադարձ կախվածությամբ՝ արդյունքում կրկին փաստելով այն, որ խոշորացումից հետո համայնքներում զգալիորեն ավելացել է պետական բյուջեից ունեցած կախվածության մակարդակը, որն, ի տարբերություն սեփական եկամուտների, աճում է ավելի արագ տեմպով:

ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի մակարդակների վրա խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանությունը թույլ է տալիս համայնքների եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի մակարդակները վերլուծել ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ կշռելու արդյունքում՝ ձևավորելով «եկամտի կշռված ապակենտրոնացման ինդեքս» և «ծախսերի կշռված ինդեքս» ցուցանիշները:

Վերջիններիս հաշվարկի համար մշակված բանաձևերի համախումբը ներկայացվում է ստորև⁹.

$$\Delta \text{Ե}_{\text{ա}} = (\text{Ե}_{\text{ա}2017} - \text{Ե}_{\text{ա}2012}) / \text{Ե}_{\text{ա}2012} * 100 (\%),$$

որտեղ՝

$\Delta \text{Ե}_{\text{ա}}$ ՝ եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշի փոփոխություն (2012-2017 թվականների համար)

$\text{Ե}_{\text{ա}2017}$ ՝ եկամուտների՝ 2017 թվականի ապակենտրոնացման մակարդակ

$\text{Ե}_{\text{ա}2012}$ ՝ եկամուտների՝ 2012 թվականի ապակենտրոնացման մակարդակ

$$\Delta \text{ՀՆԱ} = (\text{ՀՆԱ}_{2017} - \text{ՀՆԱ}_{2012}) / \text{ՀՆԱ}_{2012} * 100,$$

որտեղ՝

$\Delta \text{ՀՆԱ}$ ՝ ՀՆԱ ցուցանիշի փոփոխություն (2012-2017 թվականների համար)

ՀՆԱ_{2017} ՝ ՀՆԱ 2017 թվականի ցուցանիշ

ՀՆԱ_{2012} ՝ ՀՆԱ 2012 թվականի ցուցանիշ

$$\text{ԵԿԱԻ} = \Delta \text{Ե}_{\text{ա}} / \Delta \text{ՀՆԱ},$$

որտեղ՝

ԵԿԱԻ ՝ եկամտի կշռված ապակենտրոնացման ինդեքս

Առաջարկվող մեթոդաբանությունը փորձարկվել է 19 խոշորացված համայնքների թե՛ եկամուտների և թե՛ ծախսերի տվյալների վերլուծության շրջանակներում, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ խոշորացումից հետո շատ քիչ թվով համայնքներում է նկատվում եկամտի կշռված ապակենտրոնացման ինդեքսի աճ, իսկ ծախսերի կշռված ինդեքսի ցուցանիշները հիմնականում աճել են, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ խոշորացումը հիմնականում բացասաբար է ազդել համայնքների եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշի վրա՝ միաժամանակ ունենալով դրական ազդեցություն ծախսերի վրա:

Այսպիսով, առաջարկվող գործիքակազմի կիրառությունը սահմանափակված չէ միայն համայնքների եկամուտների և ծախսերի վերլուծություններով: Այն ունի կիրառման լայն հնարավորություններ համայնքների այլ ցուցանիշների գնահատման շրջանակներում: Վերջինիս արդյունավետ օգտագործումը դրականորեն կանդրադառնա համայնքներում ապակենտրոնացման մակարդակը բնութագրող ցուցանիշների և դրանց վրա խոշորացման ազդեցության գնահատման նպատակային հաշվարկների իրականացման տեսանկյունից:

⁹ Հիշյալ բանաձևերի համախումբը նույնությամբ կիրառելի է նաև ծախսերի վերլուծության գործընթացում:

Առաջարկվող գործիքակազմի կիրառումը կարող է նպաստել, որպեսզի համայնքները սկսեն վարել պատշաճ վիճակագրություն տեղական տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ, ինչի արդյունքում հնարավոր կլինի առավել խորքային վերլուծություններ իրականացնել՝ տեղական տնտեսական զարգացման ոլորտում սեփական լիազորությունները առավել արդյունավետ իրականացնելու, փաստահեն քաղաքականություններ մշակելու, ինչպես նաև համայնքի բյուջեն արդյունավետ պլանավորելու նպատակադրմամբ:

Առենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում ամփոփվել են հիմնական արդյունքները և հակիրճ ներկայացվել հիմնական առաջարկությունները, մասնավորապես՝

- Խոշորացման ազդեցության պայմաններում համայնքները շարունակում են կախված մնալ պետական բյուջեից, ինչի արդյունքում բացի հողի հարկից և գույքահարկից այլ հարկային եկամուտներ չեն մասհանվում համայնքի բյուջե: Բացի այդ, խոշորացումն առանձնապես չի նպաստել սեփական եկամուտների դիվերսիֆիկացմանը՝ հնարավոր հարկային այլ աղբյուրների ներգրավմամբ, ինչը սահմանափակում է համայնքներին ունենալ իրական շահագրգռվածություն համայնքում տեղական տնտեսական զարգացման տեսանկյունից: Նշված խնդրով պայմանավորված՝ համայնքներին չի հաջողվում նաև լիարժեք իրականացնել տեղական տնտեսական զարգացմանը նպաստող սեփական լիազորությունները, ինչը էապես խոչընդոտ կարող է հանդիսանալ համայնքներում լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների (ֆինանսական և վարչական) առաջիկա խորացման պայմաններում: Ուստի, շատ կարևոր է այդ գործընթացներում մշակել նաև ֆինանսական ռեսուրսներով ապահովման գործուն մեխանիզմներ՝ շեշտադրում կատարելով սեփական եկամուտները ձևավորող հարկային եկամուտների ընդլայնման ուղղությամբ:

- Խոշորացման արդյունքում մի շարք համայնքներում սեփական եկամուտների բացարձակ թվով աճը պայմանավորված է եղել ինչպես ՀՀ մի շարք համայնքներում հարկահավաքման տոկոսի ավելացմամբ, այնպես էլ սեփական եկամուտներում պետական տուրքի, տեղական վճարների տեսակարար կշռի մեծացմամբ: Հարկ է ընդգծել, որ համայնքները խոշորացման արդյունքում կարողացել են էապես բարելավել հարկային վարչարարության լիազորության կատարման արդյունավետությունը, ինչը թույլ է տալիս նախանշել նոր լիազորություններ համայնքներին պատվիրակելու հնարավորությունները և եզրակացնել, որ այլ հարկային եկամուտների մասհանումը համայնքի բյուջե չի առաջացնի հավելյալ դժվարություններ կապված հարկահավաքման գործընթացների հետ:

- Վերլուծության շրջանակներում առաջադրված հիպոթեզը (ՀՀ-ում համայնքների զարգացումը կարող է ընթանալ պետական բյուջեից ունեցած մեծ կախվածության և եկամուտների ապակենտրոնացման մակարդակի նվազման պայմաններում) հիմնավորվել է խոշորացված Ծաղկահովիտ և Ալազյազ համայնքների օրինակներով, քանի որ վերջիններս, ունենալով պետական բյուջեից աճող կախվածություն, կարողացել են համայնքապետարանի աշխատակազմին վճարվող աշխատավարձերի գծով մեկ շնչին բաժին ընկնող ծախսերի նվազման պայմաններում ապահովել տնտեսական հարաբերությունների գծով մեկ շնչին բաժին ընկնող ֆոնդային ծախսերի կտրուկ աճ՝ ծախսերի մեծ մասն ուղղելով ենթակառուցվածքների բարելավմանը և այրկերպ նաև նպաստելով տեղական տնտեսական զարգացմանը:

- Համայնքների խոշորացման արդյունքում ծախսերի տնտեսական արդյունավետության գնահատման արդյունքում հնարավոր է դարձել հիմնավորել, որ խոշորացումն ավելի շատ դրական արդյունքներ է ապահովել հենց այն համայնքներում, որտեղ մինչ խոշորանալը ծախսերի էական մասն ուղղվում էր վարչական ապարատի պահպանմանը: Բացի այդ, չնայած խոշորացման արդյունքում որոշ համայնքներում նկատվել են աշխատավարձի ֆոնդի ծախսերի որոշակի կրճատումներ և, միաժամանակ, փոքր համայնքներում ընդլայնվել են նաև հանրային բնույթի ծառայությունների մատուցման ծավալները, այնուհանդերձ համայնքները դեռևս սահմանափակված են մնում այնպիսի սեփական լիազորությունների իրականացմամբ, որոնք իրենց բնույթով մոտ են քաղաքացիներին և հիմնականում ուղղված են առաջնային հանրային բնույթի ծառայությունների մատուցմանը:

- ՀՀ խոշորացված 64 համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հարցման արդյունքները թույլ են տվել բացահայտել համայնքում լիազորությունների արդյունավետ կատարմանը խոչընդոտող հիմնական գործոնները և դրանց ունեցած ազդեցության չափը: Արդյունքում, հետազոտության շրջանակներում մշակված՝ լիազորությունների արդյունավետության գնահատման գործիքակազմի ներդրումը համայնքներում թույլ կտա լիազորությունների ապակենտրոնացման առաջիկա գործընթացներում բացահայտել լիազորությունների արդյունավետ իրականացման հիմնական խոչընդոտները՝ հնարավորություն տալով համայնքային ռեսուրսներն առավել արդյունավետ կերպով պլանավորել:

- Գործոնային վերլուծության արդյունքների հիման վրա հիմնավորվեց ՀՀ մի շարք համայնքներում գյուղատնտեսության և արտադրական գործունեության կտրվածությունը, ինչպես նաև ընդգծվեց ՏԻՄ-երի դերը համայնքում բնակիչների սոցիալական խնդիրների երկարաժամկետ լուծումների մշակման գործընթացներում՝ միաժամանակ կարևորելով համայնքի ղեկավարների՝ գյուղատնտեսության և սոցիալական ոլորտների լիազորությունների առավել արդյունավետ ապակենտրոնացումը:

- Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ եթե խոշորացումից առաջ համայնքում հարկային ինքնավարության աճը ուղեկցվում էր «սեփական եկամուտներ/ՀՆԱ» աճով, ապա խոշորացումից հետո այդ ցուցանիշը նշանակալիություն չի ապահովել: Փոխարենը, խոշորացումից հետո պետական բյուջեից կախվածության աճը հանգեցրել է «սեփական եկամուտներ/ՀՆԱ» ցուցանիշի նվազմանը: Ստացված արդյունքներ՝ պետական բյուջեից աճող կախվածության պայմաններում խիստ կասկածի տակ են դնում համայնքների վարչական և ֆինանսական ապակենտրոնացման գործընթացների հաջող ընթացքի ապահովումը:

- ՀՀ մի շարք համայնքներում մեկ բնակչի հաշվով ծախսերի և տեղական հարկերի հիման վրա հաշվարկված վարիացիայի գործակցի աճը պայմանավորված չէ միայն խոշորացման գործոնով, քանի որ մեկ շնչին բաժին ընկնող ծախսերի և հարկային եկամուտների բարձր ցուցանիշներ են նկատվում նաև չխոշորացված համայնքներում: Մինչդեռ, փոքր համայնքներում շարունակվում են պահպանվել ծախսերի և եկամուտների փոքր մակարդակներ, ինչի արդյունքում ընդգծվել է փոքր համայնքների խոշորացման առավելությունը՝ մեկ բնակչի հաշվով ծախսային և եկամտային ապահովվածության մակարդակը մեծացնելու նպատակադրմամբ:

- Համայնքի եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի մակարդակների վրա խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանությունը մշակվել և կիրառվել է 19

խոշորացված համայնքներում, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ խոշորացումից հետո շատ քիչ թվով համայնքներում է նկատվում եկամտի կշռված ապակենտրոնացման ինդեքսի աճ, իսկ ծախսերի կշռված ինդեքսի ցուցանիշները հիմնականում աճել են, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ խոշորացումը հիմնականում բացասաբար է ազդել համայնքների եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշի վրա՝ միաժամանակ ունենալով դրական ազդեցություն ծախսերի վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են հետևյալ հոդվածներում.

1. Ք. Թաթոսյան, «Տնտեսական ապակենտրոնացման արդյունավետությունը՝ վարչատարածքային բարեփոխումների համատեքստում (Սյունիքի մարզի օրինակով)», ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածու, N 1, ISSN 1829-4324, 2022, էջեր 94-110:

2. Ք. Թաթոսյան, Համայնքների խոշորացման ազդեցությունը ՏԻՄ լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում (Ջերմուկ խոշորացված համայնքի օրինակով), ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ, 2022, N 2, էջեր 63-76:

3. Հ. Գալստյան, Ք. Թաթոսյան, Գ. Բաղդասյան, ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի օպտիմալ կառավարման մակարդակի գնահատումը (ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի օրինակով), ԲԱՆԲԵՐ Եվրասիա միջազգային համալսարանի, 2023, N 2, DOI: 10.53614/18294952-2023.2-93, էջեր 93-105:

4. Ք. Թաթոսյան, ՀՀ վարչատարածքային բարեփոխումների ազդեցությունը համայնքների կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից (ՀՀ խոշորացված համայնքների վերլուծության օրինակներով), Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, 2024, N 1, 2024, էջեր 123-138:

5. Ք. Թաթոսյան, Լիազորությունների արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը և դրա ներդրման կարևորությունը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 1, 2024, էջեր 39-53:

6. Ք. Թաթոսյան, «Խոշորացման ազդեցությունը ՀՀ համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների վրա», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, N3, 2024, էջեր 162-169:

7. Ս. Ավետիսյան, Գ. Թովմասյան, Լ. Միրիջանյան, Ք. Թաթոսյան, Ի. Գալուստյան, Ա. Ռուշանյան, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի զբոսաշրջային ռեսուրսների վերլուծությունը, ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ, 2020, N 3, էջեր 83-104:

8. Ս. Ավետիսյան, Գ. Թովմասյան, Լ. Միրիջանյան, Ք. Թաթոսյան, Ի. Գալուստյան, Ա. Ռուշանյան, Ագրոզբոսաշրջության զարգացման միջազգային փորձի վերլուծությունը, Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, 2020, N 2, ISSN 1829-4952, էջեր՝ 120-133:

9. K. Tatosyan, Factor analysis of socio-economic development of enlarged communities of RA, ASUE Messenger, N1, 2024, pp.80-93.

10. G. Tovmasyan, S. Avetisyan, K. Tatosyan, L. Mirijanyan, I. Galustyan, A. Rushanyan, Analysing the Demand of Agritourism for International Tourists in Armenia, Marketing and Management of Innovations, 2020, Issue 4, pp. 90-101.

ТАТОСЯН КРИСТИНЕ МУРАДОВНА
ВЛИЯНИЕ ДЕЦЕНТРАЛИЗАЦИИ НА ЛОКАЛЬНОЕ ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ (ПО
МАТЕРИАЛАМ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 5 июня 2025 года, в 14⁰⁰, на заседании Специализированного совета 014 КВОН РА по экономике при Армянский государственный экономический университете. Адрес: РА, 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Как известно, процессы децентрализации приобретают в последнее время все большую роль и значимость, в особенности в странах, где активно реализуются процессы административно-территориальных реформ. И хотя статистические данные многих стран не позволяют оценить влияние децентрализации на локальное экономическое развитие, результаты исследований, проведенных в последние годы, показали, что высокий уровень децентрализации оказывает на него положительное воздействие. В связи с вышеизложенным, децентрализация стала большим вызовом, в особенности, для развивающихся стран.

Процесс административно-территориальных реформ в Республике Армения начался в 2011 году, когда была принята концепция «Укрупнения общин и формирования межобщинных объединений», обосновавшая важность и необходимость реализации административно-территориальных реформ в Республике Армения. В рамках оценки предпосылок углубления процессов финансовой и административной децентрализации после завершения укрупнения общин, необходимость оценки фискальной и бюджетной децентрализации общин, уровней экономической эффективности управления расходами, пропорциональности полномочий и финансовых возможностей, необходимых для их реализации, а также влияния децентрализации на местное экономическое развитие общин Республики Армения и, соответственно, необходимость разработки предложений, направленных на повышение эффективности системы местного самоуправления Республики Армения, обуславливают актуальность темы данной диссертации.

Целью представленной к рассмотрению диссертационной работы является оценка современного уровня административной и финансовой децентрализации в общинах Республики Армения, ее влияния на локальное экономическое развитие, а также предложение путей повышения эффективности процессов децентрализации полномочий в общинах Республики Армения.

Исходя из поставленной цели, в диссертационной работе были предложены и решены следующие задачи:

- Проанализировать уровни децентрализации доходов укрупненных общин на относительно ранних этапах административно-территориальных реформ РА на основе данных за период до и после укрупнения.
- Изучить международный опыт расчета уровня децентрализации и системы децентрализации полномочий, а также механизмов, направленных на обеспечение финансовыми ресурсами в рамках децентрализации полномочий.

- Оценить уровень эффективности расходов укрупненных общин РА путем сравнения некоторых видов расходов на душу населения.
 - Разработать методику оценки влияния укрупнения на основе показателей фискальной и бюджетной децентрализации в укрупненных общинах РА на относительно ранних этапах.
 - Выявить основные препятствия, являющиеся причиной неполной реализации полномочий руководителей общин, и разработать инструментарий оценки эффективности этих полномочий.
 - Провести факторный анализ на основе показателей, характеризующих состояние экономического развития укрупненных общин РА.
 - Разработать систему показателей децентрализации доходов и расходов укрупненных общин РА.
 - Оценить влияние изменений показателей, характеризующих уровень фискальной и бюджетной децентрализации укрупненных общин РА, на локальное экономическое развитие и на показатели, характеризующие состояние развития.
 - Выявить текущее состояние системы децентрализации в системе местного самоуправления Республики Армения, представить предложения, направленные на совершенствование функционирования данной системы.
 - Подчеркнуть необходимость внедрения эффективной и действенной системы децентрализации в системе местного самоуправления Республики Армения, выявить основные проблемы и препятствия на пути ее внедрения, а также предложить пути повышения ее эффективности, способствующие локальному экономическому развитию.
- В результате проведенных исследований, были получены следующие результаты, содержащие **научную новизну**:
1. На основе показателей, характеризующих экономическое состояние укрупненных общин Республики Армения, разработана модель реализации факторного анализа, с помощью которой можно выявить возможности локального экономического развития общин. Модель может быть использована для эффективного планирования долгосрочных направлений локального экономического развития общин Республики Армения.
 2. Разработан инструментарий оценки эффективности реализации полномочий руководителей общин на основе опросов, проведенных среди глав 64 укрупненных общин Республики Армения, с использованием метода получения весов относительной важности факторов. Инструментарий позволяет выявить основные факторы, препятствующие эффективному осуществлению полномочий в общинах Республики Армения.
 3. Разработана система показателей децентрализации доходов и расходов укрупненных общин Республики Армения, на основе которой предложена методология оценки влияния укрупнения на уровень фискальной децентрализации общин Республики Армения с использованием индексов децентрализации доходов и расходов общин, взвешенных по показателю ВВП.

THE IMPACT OF DECENTRALIZATION ON LOCAL ECONOMIC DEVELOPMENT (ON THE MATERIALS OF THE RA)

Abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – «Economics, Management of the Economy and its Spheres».

The defense of the thesis will take place on June 5, 2025, 14⁰⁰, at 014 Council of Economics of the HESC RA at Armenian State University of Economics. Address: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

Decentralization processes are gaining a great role and importance, especially in countries where active processes of administrative-territorial reforms are being implemented. Although the statistics of many countries do not allow assessing the impact of decentralization on local economic development, the results of research conducted in recent years have shown that a high level of decentralization has a positive effect on local economic development. Due to the above, decentralization has become a great challenge, especially for developing countries.

The process of administrative-territorial reforms in the Republic of Armenia began in 2011, when the concept of «Enlargement of Communities and Formation of Inter-Community Unions» was adopted, which substantiated the importance and necessity of implementing administrative-territorial reforms in the Republic of Armenia.

Within the framework of assessing the prerequisites for deepening the processes of financial and administrative decentralization after the completion of the enlargement of communities, the need to assess the fiscal and budgetary decentralization of communities, the levels of economic efficiency of expenditure management, the proportionality of authorities and the financial capabilities necessary for their implementation, as well as the impact of decentralization on the local economic development of the communities of the Republic of Armenia and, accordingly, the need to develop proposals aimed at increasing the efficiency of the local self-government system of the Republic of Armenia is the relevance of the topic of this thesis.

The goal of this thesis is to assess the current level of administrative and financial decentralization in the communities of the Republic of Armenia, its impact on local economic development, and to suggest ways to increase the effectiveness of the processes of decentralization of powers in the communities of the Republic of Armenia.

Based on the defined goal, the following issues were proposed and solved in the thesis:

- To analyze the levels of revenue decentralization of enlarged communities in the relatively early stages of the RA administrative-territorial reforms, based on data from the period before and after the enlargement,
- To study the international experience of calculating the level of decentralization and the system of decentralization of powers, as well as the mechanisms aimed at ensuring financial resources within the framework of decentralization of powers,
- To assess the level of efficiency of expenditures of enlarged communities in the RA by

comparing some types of expenditures per capita,

- To develop a methodology for assessing the impact of enlargement based on the indicators of fiscal and budgetary decentralization in enlarged communities in the RA in the relatively early stages,
- To identify the main obstacles to the incomplete implementation of the powers of community leaders and develop a toolkit for assessing their effectiveness,
- To conduct a factor analysis based on indicators characterizing the state of economic development of enlarged communities in the RA,
- To develop a system of indicators of income and expenditure decentralization of enlarged communities in the RA,
- To assess the impact of changes in indicators characterizing the level of fiscal and budgetary decentralization of enlarged communities in the RA on local economic development on indicators characterizing the state of development,
- To identify the current state of the decentralization system in the local self-government system of the Republic of Armenia, to present proposals aimed at improving the sector,
- To emphasize the need for the introduction of an effective and functioning decentralization system in the local self-government system of the Republic of Armenia, the main challenges and obstacles, and to propose ways to increase their effectiveness, which can simultaneously contribute to local economic development.

Scientific novelty of the research. As a result of the studies and analyzes carried out within the framework of the thesis, the following results containing scientific novelty were put forward:

1. Based on the indicators characterizing the economic situation of the enlarged communities of the Republic of Armenia, a model for implementing factor analysis has been developed, through which it is possible to identify the opportunities for local economic development of communities. The model can be used for effective planning of long-term local economic development directions in the communities of the Republic of Armenia.
2. A toolkit for assessing the effectiveness of the implementation of community leaders authorities has been developed, based on surveys conducted among the heads of 64 enlarged communities of the Republic of Armenia, using the method of obtaining the weights of the relative importance of factors. The toolkit allows identifying the main factors hindering the effective implementation of authorities in the communities of the Republic of Armenia.
3. A system of decentralization indicators of income and expenditure of enlarged communities of the Republic of Armenia has been developed, based on which a methodology for assessing the impact of enlargement on the level of fiscal decentralization of the communities of the Republic of Armenia has been proposed, using decentralization indices of income and expenditure in communities weighted by the GDP indicator.

